

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆ

Լ.Ձ ՄԸ ՍԱՍՄԱՆՅ ՏՈՒՆԷՆ

(Ա. ԿԱՐԿԱՌԻ ԲԱՐԲԱՌՈՎ.)

Սանասար ու Բաղդասար

322. Ժուկ ըմ ֆնացին, աւտւր մէկ ջոջ ախպէր Սանասարի՝ կումրի թնւաւորին (ը)սաց. —

— «Թնւաւոր ապրած կէնանս, ըսաց, մի (մեզի) տեղ մ'շայտասա (ցոցանես)՝ մի տու՝ մ' շինինք»:

323. Կումրի թնւաւոր (ը)սաց, —
— «Հէյ փուրդի, ըսաց, տուն իշ (իմ) տ'էնէք. տուն չիս շինուկ ա. երս տղայ չունիմ, բան չունիմ. չէ՛մ (չէի) տղէն էլ) դիւ եիք (դռք էք), յիտե ըմ մեռնիսն՝ երմ թնւաւորութէն էլ ձի-եւ (ձեզի), զըմէն եղած ու չեղածն էլ չիս (աղդէն) ձի-եւ. նստէք ըմ տեղ՝ թնւաւորութին էրէք...»:

324. Սանասար (ը)սաց. —
— «Թնւաւոր ապրած կէնանս, ըսաց, էն տուն իշ միյն մի քնամկով չլինի՛ն՝ մի (մեր) քուն չըտանի ինի. կ'անայ»:

«Վով չըլինեք քնամկով տընիկ՝
«Չը քիճեք մէյ անուշ քիճիկ»:
— «Վըր ընձկոն ը, (ը)սաց Կումրի թնւաւոր, ձի (ձեզի) վըր տեղ պիտաւայ՝ ձե(ր)տուն գի շինէք... տեղ չատ...»:

325. Սանասարու Բաղդասար էլան գեանցըն մէ՛ գայտի մ' մէյ, չորս շուք չորս քեար գրին, անին. —

— «Ուխտ եղնի՛ չուր մի տան ա. նուն չարւր միյն մե(ր) տան իմ չընայն չլինիք...»:

326. Դեօրիս պալլեցին սարերուց

կարածուրի(կ) քեար կ'բերին, ջոջ ու ջոջ՝ խրնձ պատմ՝ ու բերդ մ'. ուրինց քնամկով կը կրին կը բերին, զ'ուրինց տուն տըլինին:

327. Կ'գէտնան կ'իյնն՝ վըր տեղ ինչ ջոջ ծառ ու գիէրան Գնդնին (գըտնեն)՝ կը կարին դնին վըր ուրինց թէւքիէրուն, կ'բերին ուրինց տունը-վէ:

328. Դեօրիս կ'անին. —
— «Մ'արդ ըմ գն(դ)նիք՝ անուն գընա մի տան՝ վըրտա շինինք...»:
329. Վ'որ էրի (ը)նցաւ՝ խառնընէցին, մէկ չկանցաւ տեղեակ անու(ն) մ' գնէր...:

330. Սուր մէկ, տեսն՝ մէ՛ փիւր ըխթիւս պապիկ մ'էրի կ'ընցէր, ջ'անես խալիտակ Սատմէր, գիւնք ընց մարդակերպ՝ ընկեւ վըր փէտերուն՝ էրի...:

331. Խառնընէցին (ը)սին, —
— «Պապիկ, (ը)սին, դիւ (տ) չըս կէնայ մի (մեր) տան անու՛մ՝ գնի...»:

332. Ըսաց. —
— «Պապիկ մեռնի ձի, ըսաց. երս ամիս մ'էլ չըմ կէնայ ձեք տան բէօլը պտտտ առնի... երս տ'իշխ ձի՛ տան անուն տըղընիմ...»:

333. Պատիկ տխպէր Բաղդասար (ը)սաց. —

— «Պապիկ, ըսաց. անի երմ քեւ մակ՝ գ'ըլի չլիմ՝ բէօլը կան ածիմ, դիւ (ի)րիչիւ»:

334. Գ'էնի չլից, փաթ մ' բէօլը տան՝ կան անց, ու է՛մէլ չլիւծ տեղ էրի գիէտըն, (ը)սաց, —

— «Պապիկ, (ը)սաց. դէ՛ անու(ն) մ' դի մի տան»:

1. Ինչպէս որ Կ'ըսեն... ըստ արտօնանք...

335. Ըսանք. —

== «Պապիկ մեռնի ձի, (ը)սանք էսիկ էլ տուն չի..., էսիկ էլ տան բանգան չի..., էսիկ(կ) ՍԱՍՈՒՄ ա, ՍԱՍՈՒՄ...»:

336 Սանասար ու Բանգանսար (ը)սին. —

— «Պապիկ, ըսին. վրլլւմ դիւ մի' տան անու(ն) մ'դրիր' ու բալէ գրիր. Սանասար ու Սանգան»:

337. Էնգիւց ետ' էն տան անու(ն) մնաց' ՍԱՍՄԱՆՑ ՏՈՒՆ:

338. Դեօրիս էլան բերին նոր զէգա Սասմանց Տան խիմ բանցին, չինէցին, ծածկէցին ու թըմէցին:

Բ. ՍՊԱՐԿԵՐՏԻ ԲԱՐԲԱՌՈՎ

ԹԻՒԼ-ԴԱԽԻԹ

478. Խաքար յիւստ տանք, — Խաքար Դէմիթից տանք... Խինգը բաթ օր Դէմիթի էլան առեց մէ(կ) տիկ գլինին, մէ(կ) տիկ աղ' գիւնանց էլան Սեւ-Սարը գիւլիոխ, աղ իւց յաղլէզ, գլինին իւց յառազ' ու փշու' մ' զանանցաւ, ըսանք. —

— «Տօ' ան Բնէ ձի-եմ' որ անու քիամին գ'ձի տը թալը...»:

479. Մն էլ ըսկի փոս չըփորեց, գինքնէզինչ փշու' մ' զանանցաւ ու պուպուզաւ:

480. Ձին գ'խոտ առեց' գլինու խոտ ու աղին' ու իրի (եկաւ)...:

481. Ձիու քիամին գ'Դէմիթի էձ կեց բէրանքսը-վէ'. ձին իրի տէսաւ օր(որ) աղ լցած յաղլէզ, գլինին լցած յառազ' իսանաւ գ'աղ կերաւ, գ'գլինին խմաւ, ըսանք. —

— «Օջնալ ը Սալված..., քոռնմաւ քեանսուն տարին' որ մնաթով խանց ու ջիւր եմ կիրեր..., յէսօր քնոռնաք խաց ու ջիւր եմ խմեր ու կիրեր...»:

482. Մն էլ (է)լան ընկեմ մանչ աղա Սարին' կան իրի. գիրնանց տէսաւ օր' մէ' դգալ վըր բէրնին ընկեր ա, ան էլ (ձիւ) մաութ է տու' գ'աղէն չիտ կեց վըր քեանկան:

483. Դէմիթին էլ' խեւ ընկեմ վըր քեանկան' աչք ընկեմ ձիու էրէս' ան էլ նիրքուց (նիրքուն) պառ կուկ տեղ' գ' զեւաւ բանեց' էլան ու թռաւ ձիու քեանկալ...:

484. Ձին Բնէ ըսանք. —

— «Տղայ, ըսանք. Դիւ (ը)նձկոմ կ'աղաղութին ունիս' կ'իլնիս ըմ քեան մակ...»:

485. Ըսանք. —

— «Ունիմ Սա'ծօվ...»:

486. Ըսանք. —

— «Քյի կըտամ արէգեանկան կ'վառնի...»:

487. Ըսանք. —

— «Երս կ'խաղամ քիու փուռու տակ' քիու քեանմա(կ) կ'վառնը' երս կ'մնամ սաղ...»:

488. Ըսանք. —

— «Քյի կ'զանիմ ծօվ կը խեխ տիմ...»:

489. Ըսանք. —

— «Երս կը խաղամ վըր քիու քեանկան գիւ կըխեխդուիս' երս կ'մնամ սաղ...»:

490. Ըսանք. —

— «Քյի կ'զանիմ սարեր ու քիաւեր...»:

491. Ըսանք. —

— «Դիւ որ կող զանիս սար երս կ'խաղամ քիու մէկել կող...»:

492. Մն ժամանայ' ձին ըսանք. —

— «Դէմիթի, ըսանք. Խաբիր (100) տարի երս քիու խօր տակն իմ կապեր, անու ձիութին իմ էրեր. Խաբիր տարի էլ քյի ձիութին տ'էնիմ. երս քյի ձի' գիւ ձի (իւնի) տէր. երմ անուն էլ' Գուռկիկ - Զալալին կ'ըսին...»:

493. Մն ժամանայ Դէմիթի զ'ձին առեց ու իրի տուն:

494. Ձ'Ձրեխ - Պողոստին չապիչ խագեմ' քիառուն նեւ (կանգնաւ) գիւտըն գիրնանց' է տու վի' ու կապեց. Գեանմարը - Ձեռին կապեց' քեառուն փաթ իպի բէօլը միջանք:

կանոս խողւային իդի գիրլիոխ, ետ թ
կիդր բամբակ իդի (իննի՝ նոր մոտա
գիրլիոխ. թուր-կէծակին կապեց՝
քեառսուն նետ փռւաւ գիէտըն. Գորգ
-Մհէրին իդի վար ձիուն չկանցաւ
վերուցեր էր...

45. Ան ժամանակ խորոխպէր Զե-
նով-Սիւսն րսաց՝. —

— «Ափսոս, որ խաղաւ ար...»

— Գէօ՝ արսոս...

«Գիւննաց մեր Սասնու՝ Գորգնը -
Մհէրին...»

— Ու Մհէրին...

— «Ափսոս, ու խաղաւ ար...»

— Գէօ՝ արսոս...

«Գիւննաց մեր Սասնու՝ թուրնը -
կէծակին...»

— Ու կէծակին...

— «Ափսոս, ու խաղաւ ար...»

— Գէօ՝ արսոս...

«Գիւննաց մեր Սասնու Ռում-Ջո-
կային...»

— Ու Ջոկային...

— «Ափսոս, ու խաղաւ ար...»

— Գէօ՝ արսոս...

«Գիւննաց մեր Սասնու՝ Ջրեխ-Պող-
վըտին...»

— Ու Պողվըտին...

— «Ափսոս, որ խաղաւ ար...»

— Գէօ՝ արսոս...

«Գիւննաց մեր Սասնու՝ Կնու՝ խո-
դային...»

— Ու խոդային...

— «Ափսոս, որ խաղաւ ար...»

— Գէօ՝ արսոս...

«Գիւննաց մեր Սասնու՝ Գեւմաւր-
նը-Ջէռին...»

— Ու Ջէռին...

— «Ափսոս, ու խաղաւ ար...»

— Գէօ՝ արսոս...

«Գիւննաց մեր Սասնու՝ Քուռկիկ-
Ջալային...»

— Ու Ջալային...

— «Ափսոս...» ու խաղաւ ար...»

— Գէօ՝ արսոս...

«Գիւննաց մեր Սասնու՝ Նոր-Մա-
նուկ...»

— Ու Նոր-Մանուկ...»

496. Գեւմաւր իմ ժամանակ Լ-
սաց. —

— «խորոխպէր, Լսաց. անգամ մէկ
խոսք դիւ չտէր (չտայիր)՝ ե՛ր քիռու
վիզ տրկարէր՝ ու նոր իյէր (երթայի)
Մարը. ու թի գէր, ու թի չգէր (ու
թէ գայի՝ թէ չգայի)...

497. Խաղաւ ուղեց խորոխպորմեն՝
ու խէծաւ ու քէց...

ԵԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ. — Այս զոյգ սքան-
չելի գաւառաբարբառներով իմ գրի առած
փոփոխակը բնագրիս բոլոր ներուժիւննե-
րովը հոս արտատպելը կարելի չէ՛ ճա-
ռեր, փակագիծեր, շեշտեր ու մասնաւոր
նշաններ կը պակսին:

Փոքրիկ ճաշակ մը տալու փափաքով
արտագրածս այս կարճ հատուածները գո-
նէ չափով մը հասկնալի ըլլալու համար՝
այսչափ բսեմ որ, —

— Վրան գծաւոր կամ շրջուած պրերը
հնչելու է բաց ձայնով ինչպէս ֆը. Յն
(աքսանսիոքոնֆլէքսով):

— Տակը գծուած բառերը օտար (թրք.
պրսկ. արբ.) բառեր են և գործին վերջը՝
առանձին բառերով մէջ բացատրուած են:

— Բառերու մէջը, վերջը և սկիզբը,
պարագային համեմատ, կը զեղչուին, կը
սղուին, կամ կիսամայն կը հնչուին՝ շատ
մը բաղամայն հնչուածներ, կամ ձայնաւոր-
ներ: Առոնք փակագծի մէջ առած ենք
գիրին վերի կողմէն:

— «Լսաց» բայը որ կը կրկնուի խոս-
քին մէջ երկու անգամ, պէտք է արհա-
գանգի պէս հնչեցնել վերջինը՝ առաջինին
ետեւէն անմիջապէս, օրինակ. — «Բաղ-

1. Երբ է, ուրբեմն սրտազարա եղանակով, Երբեմն եւ
ու կոմիտաս վրդպտ. ձայնագրած է, Զիթ.

դասար րասց՝ Պապիկ րասց»։ Կամ
«Հարցնեցին ըսին՝ Պապիկ ըսին»։ Էն։

— Այն մէկ համար՝ տրոհած ենք և
թուակարգի դրած։ Ճախէն աստղանիշ^(*)
կրող համարները լրանթագրութեանց Բաժ-
նին մէջ ունին քաղաքապետութիւններ՝ նա-
խորդ փոփոխականներու, անձնանուններու,
աշխարհագրական, պատմական, բարբա-
ռային, կամ հանգիստութիւններու։

Սասմանց Տունի եօթը ճիւղին ամբող-
ջական պատմութիւնը եւ բախտ ունեցայ
զրի առնելու 1907—1910ին, իմ ծննդա-
վայրիս վանայ մէջ, Կարկառցի և Սպարա-
կերտցի երեք գաւառացիտուն գիւղացիներէ։
Եօթը ճիւղերն են 1. Սանասար ու Բաղ-
դասար, 2. Դաւիթ (Մհէր), 3. Թլու-
Դաւիթ, 4. Մհէր, 5. Պարոն-Տէր-Ներ-
սէս, 6. Յարման, 7. Համզա-Փահլէվան։

Պատմողներուն բարբառն ու կորովի լե-
զուն՝ անգերագանցիկ կը մնայ ասկէ ա-
ռաջ տպուած 16 փոփոխականերու լեզուին
հետ համեմատելով։

Եղանակով երգուած կտորները բազ-
մաթիւ են, պատմուածքին կապը անշեղ,
բարբառը՝ յոյժ հարազատ, մաքուր, սա-
հուն ու վսեմ, — Փրոֆ. Գրիգոր Խալա-
թեանցի որակումովը՝ «սքանչելի՝ գաւառա-
կան լեզու»։

Ինագիրը զոր պատմել տուեր եմ պատ-
միչներուս երեք անգամ ու անկէ յետոյ
զրի առած եմ ֆոնոկրաֆի հաստատումու-
րեամբ, — զրչագրած եմ հայերէն ամե-
նամաքուր տառերովը՝ ճտրագիր որպէս զի
ոնէ՝ տառական շփոթութիւն հնար չըլլայ
և բարբառին հարազատ ներդրութիւնները
նոյնութեամբ պահուին իբր ամուր ու վրա-
տահելի ատաղձ՝ լեզուաբանութեան։

Գործիս մէջ տուած եմ նաև զոյգ բար-

բառներուն քերականութիւնը՝ օրինակներով
(համարներով բնագրին հետ կապուած)։
Վերջը՝ տուած եմ բազմաթիւ ցանկեր՝ բնա-
գրին համարներուն հետ կապուած։

Սասմանց Տունիս, ինչպէս և իր լրա-
ցուցիչ Յերան-Թորանիս՝ մէջ դրած եմ
կարեւոր պատկերներ, լուսանկարներ և
քարտէսներ։

Սասմանց Տուն և Յերան — Թորանը,
 $800 + 300 = 1100$ էջ, արժանացած
են Իզմիրեանց Գրական Մրցանակին ի
Պոլիս, 1914-ին։

Սասմանց Տուն, Հայ Ժողովրդական
Դիւցազնավէպը, — մեր անգիր վէպերուն
թագն ու պսակը—մեր ազգի դարաւոր կեան-
քին խտացած զմայլելի մանրանկարը, մեր
Անգիր Խորհնացին է, Ազաթանգեղոսը կամ
Փառաստոսը։ Մեզ համար այն է՝ ինչ որ
է Շահ-Նամէ՝ Պարսից համար։

Շահնամէն աւելի՝ բարձր է մեր Սաս-
մանց Տունը, զի ան Ֆիրդուսիի մը ըն-
դիւլզածն է, մինչ մերինը ամբողջ Հայ
Ժողովրդի պարած դարերու խորքերէն
բխած կու գայ մեզի՝ ամենի Տիգրիսին պէս։

Ինչ զմայլելի մտաւոր կարողութիւն է
որ կը գտնենք Սասմանց Տան մէջ՝ հայ
աւանդասէր գիւղացիներուն ճով բերնէ—
բերան պահուած, որոյոց որդի աւան-
դուած... — քսանեակ մը դարերէ ի վեր։

Անկախութեան զազափարի անմահն աղեղ
մը՝ սոս երկու տողին մէջ, —

— «Ով չը յիներ. քամկով տրեխի՝

«Ձի՛ քրէր մկ անու՛ քրէիկ...»։

Սասմանց Սանասարի կտակն է երկու
բառով...։

Փարիզ

Տ. ԶԻՌՈՒՆԻ

1. Ուրիշ ասիմով կու տամ Յերան-Թորանէն ճաշկ
մը՝ հայ-ցրտական վիպերգին։